

*ՀԲԸՄ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ՊԱՏՅԱՆԻ ՄԵՋ*



*ՀԲԸՄ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ՊԱՏՅԱՆԻ ՄԵՋ*

Հայրենիքում էլ բաժանորդն անհասանելի է Հայրենիքում այս օրերին (հոկտեմբերի 1-9-ը) համաշխարհային համագումար է հրավիրել Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ): Քանի որ հայաստանցիներն ընդհանրապես չեն հիշում, թե երբեք բարեգործականը նման ներկայանալի հավաք անցկացրել է այստեղ (թեև ՀԲԸՄ-ի ղեկավարությունը պնդում է, թե 1994-ին իրենց ընդհանուր ժողովը գումարվել է Հայաստանում), պետք է համարենք, որ իր 98-ամյա պատմության ընթացքում սա միության անդրամիկ ներկայությունն է հայրենիքում: Միանգամայն հարմար առիթ, վերջապես, ի մոտո ծանոթանալու ՀԲԸՄ ղեկավարության, վարչության անդամների հետ, պարզելու, թե ի վերջո ի՞նչ հիմնավորմամբ է բարեգործականը որոշել փակել Կիպրոսի Մելքոնյան կրթական հաստատությունը, որը, ըստ ՀԲԸՄ-ի 2004-ի մարտի 16-ի որոշման, 2005-ի հունիսից այլեւս չի գործելու: Աղմկահարույց փաստ, որը մեկ տարի է շարունակում է հուզել, մտահոգել, վրդովեցնել հայ հասարակությանն ընդհանրապես, հայաստանյան մտավորականությանը հատկապես: Երեկ, սակայն, երբ ներկա եղանք Ամերիկյան համալսարանի կենտրոնում ընթացող բարեգործականի համաժողովի առաջին նիստին, ակնհայտ դարձավ, որ ՀԲԸՄ-ի օտարերկրացի հայ պաշտոնյաներն ընդհանրապես զահլա չունեն որեւէ հարցի առնչությամբ հայաստանյան ՁԼՄ-ների ներկայացուցիչներին «բան մը ըսելու»: Ավելին «հայապահպանումը» հավատամք դարձրած այս միության երեկվա նիստն ընթանում էր բացառապես անգլերեն լեզվով: 83-րդ համաշխարհային հավաքի առանձին պատասխանատուներից որեւէ տեղեկատվություն ստանալու (առավել եւս Մելքոնյանի վերաբերյալ) մեր բոլոր ճիգերն ապարդյուն եղան: ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակյանը զոնե մի քանի հարցերի պատասխանելու մեր խնդրանքը ոչ միայն կտրուկ մերժեց, այլև չոր ու արգահատալից տոնով վայրկենապես թաղեց մեր վերջին հույսը: Ո՛չ այս օրերին, ո՛չ էլ համագումարի ավարտից հետո որեւէ ասուլիսի չսպասեք: ՀԲԸՄ-ի մամուլի պատասխանատուի՝ Վարդան Ծուլիկյանի պահվածքը շեֆից չէր տարբերվելու. այ հենց էդպես, զնացեք ու տեղեկատվության սովից մեռեք: Հետաքրքիր է, ինչո՞ւ են այդքան տարածություն կտրել ու հասել այստեղ ժողով գումարելու, եթե 22 երկրներից ժամանածները պետք է հայրենիքում երկաթ պարսպով պատնեշվեն ՀՀ քաղաքացիներից եւ ժամերով անգլերենով քննարկեն, ասենք, Հայաստան-2020 ծրագիրը՝ չբարեհաճելով դույզն-ինչ պարզաբանումներ ներկայացնել նույն հայաստանցիներին հուզող հարցերի վերաբերյալ: Բավարարվել են ընդամենը, կոպիտ ասած, ՁԼՄ-ներին դեմ տալով համագումարի 8-օրյա ծրագիրը (այցեր, էքսկուրսիաներ, ի դեպ, մասնակիցները կիրակի օրը այցելել են Սուրբ Երրորդություն եկեղեցի) եւ մեկ էլ ՀԲԸՄ-ի 2002-2003 երկամյա տեղեկագիրը: Եւ վերջ: ՀԲԸՄ-ի պատվավոր նախագահ Լուիզ-Սիմոն Մանուկյանի բացակայությունը ավելի քան տարօրինակ է: Պարզվում է, տիկնոջ մոտ «անձնական խնդիրներ են» ծագել հենց այս օրերին, եւ չի կարողացել ժամանել: Ակնհայտ է, որ խուսափել է Մելքոնյանի փակման խայտառակ փաստի առնչությամբ սպասելի «հարձակումներից»՝ նախընտրելով գլխացավանքից պրծնել այդ կերպ

Եւ խնդրի վերաբերյալ հաշվետու չլինել այստեղ եւ ոչ մեկի առջեւ: Ի դեպ, նշված տեղեկագրում Մելքոնյան վարժարանի մասին ոչ մի հիշատակություն չկա, անգամ Պերճ Սեդրակյանի հրապարակման մեջ (որով «հետադարձ հայացք է» նետել բարեգործականի շուրջ 100-ամյա պատմությանն ու գործունեությանը) վարժարանի անունը շրջանցված է: Ասես 24 թվականին Մելքոնյան եղբայրների բարեգործությամբ հիմնադրված կրթական հաստատությունը բարեգործականի տարեգրության ուղեկիցը չի էլ եղել: Ընդհանրապես տեղեկագիրը թերթելիս ակնհայտ է դառնում, որ վարժարանի փակումը ՀԲԸՄ-ի կողմից վաղորձ ծրագրված քայլ էր: Ֆինանսական հաշվետվությունները աչքի անցկացնելիս նկատելի է, որ, ի տարբերություն այլ վարժարանների, անցած տարիներին Մելքոնյանի վերանորոգման համար ոչ մի գումար չի տրամադրվել: Միութենականները անգամ հոգ են տարել Ապուրի խոհանոցներու ծրագիրները իրականացնելու համար միջոցների հայթայթման ուղղությամբ, բայց ոչ երբեք վարժարանի: Դեռ ամիսներ առաջ որպես Մելքոնյանի փակման պատճառ նշվում էր բարեգործականի ֆինանսական ճեղքվածքը: Մինչդեռ ահա թե ի՞նչ է նշված հիշյալ տեղեկագրում. «Անցնող երկու տարիներուն մեր ընթացիկ ծրագիրներուն համար ծախսված գումարը հասած է 57 միլիոն տոլարի, որ կը ներկայացնե 12,5 միլիոն տոլարի հավելում...»: Երեկ միստի ընդմիջմանը ՀԲԸՄ-ի ղեկավարներից եւ ոչ մեկը չցանկացավ արձագանքել համագումարի նախօրյակին հայաստանյան թերթերում հրապարակված այն ծավալուն «գրությանը», որը պատրաստվել էր «Մելգոնյան Սանուց միությունների կողմից»: Անհրաժեշտ ենք համարում հիշեցնել, թե ինչպե՞ս է ավարտվում հիշյալ հրապարակումը. «Մեր ազգային այս մեծ Միության պատմության մեջ առաջին անգամ ՀԲԸՄ-ի ղեկավարությունը մեկուսացված է, կորցրել է հաղորդակցման կապն իր անդամների հետ»: Իրոք երեկ համոզվեցինք, որ թեկուզ բարեգործականը այստեղ է, սակայն ղեկավարները կապն ընդհատել են նաեւ հայրենիքի հետ: Շարունակելի

ԿԻՄԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ